ՅԱԿՈԲ ԵՊՍ. ԹՕՓՈՒՉԵԱՆՑ, ՎԱՆՑԻ. — Նախ մը. և ապա վանահայր Լիմ անապատի. աշկ. Ժառ. վարժ. ի Ս. Յակոբի վանքին։ 1836—1842 թղթակցութիւն ունեցած է Ս. Յակոբի վանքի միաբաններուն, մասնաւորապէս Սեբէոսի Արիստակէս վրդ. ի հետ (Վրդ. էջ 21). Լիմ Անապատի գործով կը ճամբորդէ 1842ին Հալէպ. և 1843ին ալ Տփխիս. ուր 1825ին վանցի մոտ. Գասպարի Լիմ, Կտուց, Վարազայ և Նարեկի չորս վանքերուն ի նպաստ ըրած կտակը գործադրելու համար ութը ամիս Տփխիս կը մնայ։ 1846ին ալ Պոլիս կը գտնուի նուիրատուութեան համար։

Յակոբ Եպս. Թօփուզեան 1847ին վանահայր կ'ընտրուի Լիմ Անապատին և կը շարունակէ պաշտօնը մինչև 1879 և կը վախճանի նոյն թուականին։

Յակոբ Եպս. հռետորի համբաւ ունեցած է. գրած է տաղաչափական գրուածներ Արծիւ Վասպուրականի թերթին մէջ (Գ. Շերենց. էջ 78). գրած է Լիմ Անապատի պատմութիւնը Մոկացի Բիղրի կոչուած Ներսէս վրդ.էն սկսելով և կը հասցնէ մինչև Գաբրիել Եպս. Շիրոյեանց՝ որուն կը յաջորդէ ինքը 1847ին. ունի նաև Զքսաւարան անուամբ հին յիշատակարաններու հաւաքածոյ մը. (Դիւան. Ժ. Գիրք, էջ 380—81)։

ՅԱԿՈԲ ԵՊՍ. ՄՀՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ.— Միաբան կ'արձանագրուի 1835ին. Ձռ. 1843ին. կնիքը 1843. չինուածապետ 1844ին. գաւազանակիր 1845ին. թարգման 1847ին. ՏՅ. 1850ին. Ներսի-դրսի խնդիրներուն առթիւ Միաբանութեան կողմէն իբր պատգամաւոր կ'երթայ Պոլիս 1861ին. եպս. կը ձեռնադրուի 1863ին. ՏԲ. 1863ին. 1866ին Եսայի պտրք.ի կոնդակով պաշտօն կը տրուի իրեն այցելութեան գնալու Հայաստանի կողմերը. «որ իր հոգևոր այցելութեամբն միանգամայն Ս. Աթոռոյս հին և նոր կալուածներն աչքէ անցընէ. զանոնք ի գիր արձանացընէ. գոյացած արդիւնքները ժողվէ և զանոնք աւելի շահաւոր գիրքի մէջ դնէ... իր շրջագայելու տեղուանքը պիտի ըլլայ Լաթաքիայէն սկսեալ մինչև Տիգրանակերտ, Սղերդ, Մշու վիճակը և անտի մինչև ի Կարին» (Սիօն, 1866, էջ 121)։ Ան կը վերադառնայ 1871ին, անոր ընդունելութեան մանրամասնութիւնները տեսնել (Սիօն, 1871). կը վախճանի 1875ին և կը թաղ-